

ՀԱՂԱՌՈՐԴԻՈՒԲԱՆՆԵՐ

ՌՈՒԶԱՆ ՊՈԴԱՍՅԱՆ

ՆԻՆ ԿՏԱԿԱՐԱՆՈՒՄ «ԱՐԱՄԵՐԵՆ» ԵԶՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ

Սուրբ գրոց երբայական բնագրում «արամերեն» եզրը գործածվում է չորս անգամ՝

ա) Դ ԹԱԳԱՐԱՆՈՒԹԵԱՆՅ ԺԸ 26՝ Եւ ասէ Եղիակիմ որդի Բեղկեայ, եւ Սովմնաս, եւ Յովաք Ասափայ՝ ցմափասկ. Խաւսեաց ընդ ծառայս քո ասորերէն (երբայական բնագրում՝ առամիւր-ՏՊՊ-արամերեն), քանզի լսեմք մեք. եւ մի՛ խաւսիր հրեարէն յականջս ժողովրդեանդ որ կան ի պարսպիդ:

բ) ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻԲՆ ԵՍԱՅԵԱՅ ԼԶ 11՝ Եւ ասէ ցնա Եղիակիմ, եւ Սովմնաս, եւ Յովաք. խաւսեաց ընդ ծառայս քո ասորերէն՝ զի լսեմք, եւ մի՛ խաւսիր ընդ մեզ հրեարէն. եւ ընդէ՛ր խաւսիս յականջս մարդկանս որ անկեալ կան զպարսպաւս:

գ) ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻԲՆ ԴԱՆԻԷԼԻ Բ 4՝ Եւ խաւսեցան քաղղեայն ընդ թագաւորին ասորերէն. Արթայ յախրեան կեաց, ասա դու զերազն ծառայից քոց, եւ զմեկնութիւն նորա ասասցուր:

դ) ԵԶՐԱՅ ԵՐԿՐՈՐԴ Դ 7՝ եւ գրեցին յաւուրս Արպաշէսի՝ Միթրիդատես, Տաբեղ, հանդերձ եւ այլ ծառայիւր նորա հարկահանաւորն, եւ գրեցին զիր ասորերէն. եւ էր զնա թարգմանեալ Նոնում Բաաղարիմ (վերջին նախադասությունը հայերեն թարգմանության մեջ հանդիպում է երկու ձևով, որոնցից երբայական բնագրին համապատասխանում է երկրորդը՝ «նամակի գիրը Ասորերէն(արամերեն) եւ մեկնութիւնն էլ Ասորերէն (արամերեն) էր»):

Ինչպես նկատելի է, «արամերեն» եզրը բնավ չի պահպանվել «Յոթնամանից» թարգմանության մեջ, քանի որ հրեա թարգմանիչներն արամերենը երբայերենից հունարեն թարգմանել են Տυριακ -սյուրիսարի, որը եւ հայերեն թարգմանության մեջ դարձել է «ասորերեն»: Նրեա թարգմանիչների այս սրբագրումը հիմք է տալիս ենթադրելու, որ սեմական ընդհանրիւր արամեական ճյուղին պատկանող հին արամերենն ու սյուրիերենը (երբայերեն՝ սյուրիւր) համարվել են նույն լեզուն: Այդպե՛ս է արդյոք: Նարցի պատրասխանը գտնելու համար անհրաժեշտ է հստակ պարկերացում ունենալ հին արամերենի պատմական զարգացման փուլերի մասին: Քանի որ հայագիտության մեջ արամերենի վերաբերյալ պահպանված հակիրճ տեղեկությունները՝ թարգմանված երոպացի արամեագետների ուսումնասիրություններից, բավարար չեն հարցի համակողմանի քննության համար, հետևաբար մեջբերումներ կատարենք հրեա սեմագետ Շմունկ Պիսքերգի «Արամերեն»

երբայերեն աշխարությունից, որում ներառված են այդ լեզվի զարգացման բոլոր շրջանները՝ հնագույնից մինչև մեր օրերը:

«Արամերենը (առամիտ - ארמי) հյուսիս-արևմտյան սեմական երկու գլխավոր ճյուղերից մեկն է, մյուսը՝ քանաներենն է: Սկզբնապես արամերենը եղել է միայն Արամի ցեղախմբի՝ արամացիների խոսակցական լեզուն, սակայն Ասորեստանի և Բաբելոնի թագավորությունների տապալումից հետո, հարկապես պարսկական փրապետության շրջանում վերածվել է միջազգային լեզվի (lingua franca) մերձավորարևելյան բազմաթիվ ժողովուրդների համար՝ մինչև արաբական նվաճումները: Արամերենի մասին առաջին անգամ հիշատակվում է Սուրբ Գրքում, սակայն ամենավաղ շրջանի արամերեն տապալումից հետո արամացիների մասին հիշվում է Թագապար Դ-ի՝ Ք. ծ. ա. 1115-1077 թթ. արձանագրություններում: Ք. ծ. ա. Ժ-Թ դդ. արամերեն արձանագրություններ են հայտնաբերվել Վերին Սիջագերքում և Սիրիայում:

Մերոնց սերունդ փոխանցվելով, արամերենը փոխվել է բազում բարբառներ, որոնցից մի քանիսն առ այսօր խոսակցական են, սակայն արդեն իսկ անհետացած են: Եզրին են և մեկ-երկու սերունդ անց իսպառ կվերանան:

«Արամերեն» եզրը բավականին հին է, քանի որ հիշատակվում է Նին կրակարանի Թագավորաց, Եսայի, Դանիելի և Էզրի գրքերում: ԺԹ դարում երոպացի լեզվաբաններն արամերենն անվանել են Chaldaean (երբայերեն՝ կաադիա), նկատի առնելով, որ Դանիել Բ 4 գլխում հիշատակված «կաադիները» (երբայերեն՝ կաադիմ) խոսում էին արամերեն:

Արամերենի պարամությունը լեզվաբանները բաժանում են հետևյալ շրջանների.

1. Նին արամերեն՝ Ք. ծ. ա. 925 - 700 թթ.,
2. Արբունական կամ պաշտոնական արամերեն՝ Ք. ծ. ա. 700-200 թթ.,
3. Սիջին արամերեն Ք. ծ. ա. 200 - Ք. ծ. հ. 200 թթ.,
4. Ուշ շրջանի արամերեն Ք. ծ. հ. 200-700 թթ.,
5. Նոր արամերեն

Արդի սեմագիտության մեջ այդ շրջանները կոչում են հին, միջին և նոր:

Նին արամերեն - Այս շրջանից պահպանվել է 30 արձանագրություն՝ մեծ մասամբ վնասված: Վերջին երկլեզվյան (աքքադերեն-արամերեն) արձանագրությունը հայտնաբերվել է Թեղ Դախիայում՝ 1981-ին: Նին արամերենի աշխարհագրական տեղայնացման վերաբերյալ գոյություն ունեն տարբեր կարծիքներ՝ ոմանց պնդմամբ այն առաջացել է Դամասկոսում ու նրա մերձակայքում և եղել է Դամասկոսի թագավորության խոսվածքը, ոմանք էլ համարում են Արամի տեղի բարբառը՝ տարածում գրած Արևելյան Եփրատից:

Արբունական կամ պաշտոնական արամերեն - գրվել է քարի, կաշվի, պապիրոսի և այլ նյութերի վրա: Աշխարհագրական ընդգրկումը չափազանց մեծ է՝ Եգիպտոս (հարկապես Էլեֆանտինի Յիվ կղզի և Ներմոպոլիս), Իսրայել, Սիրիա, Փոքր Ասիա, Ասորեստան, Բաբելոն, Նախապարս, Աֆղանստան, Պակիստան: Այս շրջանին է վերագրվում նաև Սուրբ Գրքի արամերենը: Ասորեստանի և Բաբելոնի թագավորություններում լայնորեն տարածվելուց և Արևմտյան փրապետության շրջանում որպես պաշտոնական

հարաբերությունների լեզու ընդունվելուց հետո արթունական արամերենը դարձել է *lingua franca* (միջազգային լեզու) հինարեւելյան բոլոր երկրներում:

Որոշ ուսումնասիրողներ պնդում են, որ հին արամերենը եղել է հոմոգեն լեզու, սակայն Ներմուպուխի արձանագրություններն ակնառու դարձրեցին արթունական արամերենի եւ Խիկարի առականի արամերենի տարբերությունները: Պարզվեց, որ արամերենը հոմոգեն՝ միաձին լեզու չէ, ինչպես ընդունված էր համարել երկար ժամանակ, ավելին՝ այսօր արդեն ընդունում են, որ այդ շրջանում եղել է արեւելյան եւ արեւմտյան բարբառների տարանջատում, ինչը նկատելի է դարձել ավելի ուշ:

Միջին արամերեն - Այս շրջանում արամերենը բաժանվել է երկու հարվածի՝ արեւելյան եւ արեւմտյան բարբառներով: Այդ մասին են վկայում Իսրայելի հարավում, Նորդանանում ու Չինական թերակղզում հայտնաբերված քարե արձանագրություններն ու Նուդայի անապատում գտնված պապիրուսները: Այս շրջանին են վերագրվում նաեւ Կումրանի ձեռագրերը, Նոբի գրքի թարգմանությունը եւ այլ գրքեր, ինչպես նաեւ Նոր կտակարան ներթափանցած արամերեն բառերը: Միջին արամերենի քերականության վրա զգալի ազդեցություն է ունեցել բաբելոնյան, հայրկապես թարգմանական գրականության մեջ՝ Դանիելի գրքում, Կումրանի ձեռագրերում եւ այլն: Միջազգայրում տարածված բոլոր բարբառները, այդ թվում՝ հին սյուրիերենը, (երբայերեն՝ սուրիա տարիկա) ընդհանուր առմամբ մոտ են եղել արթունական արամերենին:

Ուշ շրջանի արամերեն - Միջին արամերենի բարբառներն իրենց հերթին ճյուղավորվելով, ըստ տարածքների փոխել են 3 արեւմտյան եւ 3 արեւելյան նոր բարբառներ:

Արեւմտյան բարբառներն են՝ ա) գալիլեյան արամերեն - Այս լեզվով են գրվել Երուսաղեմյան Թ-ավմուդը, Նագադան, միդյաշները, Կահիրեի պահոցի ձեռագրերը, ինչպես նաեւ հրեական սինագոգների ձեռագրերը: Որոշ հեղափոխողներ, ինչպես օրինակ Ռոզենբադը եւ նրա հետևորդներից Պիցմայերը, գերադասում են այդ լեզուն կոչել իսրայելյան արամերեն-իբերեն (երբայերեն՝ Էբեց իսրայելիա եհուդիա):

բ) իսրայելյան սյուրիերեն (երբ.՝ սուրիա երեց իսրայելիա) - Բրիտանիայի շրջանի ամենահին արամերենն է, որով խոսել են նաեւ հրեա քրիստոնյաները: Այս բարբառի բառապաշարում մեծ տեղ են գրավել եբրայերեն բառերը: Նոր կտակարանը եւ քրիստոնեական գրականությունը հունարենից թարգմանվել են հենց այս բարբառով:

գ) շոմոնյան արամերեն (եբրայերեն՝ առամիա շոմոնիա) - Այս բարբառով են գրվել եբրայերեն-արամերեն-արաբերեն բառարանը, ինչպես նաեւ բազմաթիվ գրական ստեղծագործություններ, տաղեր:

Արեւելյան բարբառներ ա) սիրիակ (եբրայերեն՝ սուրիա) - եղել է արեւելյան եկեղեցիների լեզուն, բաժանվել է արեւմտյան մաստրայի (հակոբիկյաններ) եւ արեւելյան մաստրայի (նեստորականներ):

բ) բաբելոնյան արամերեն - գրվել է Բաբելոնյան Թ-ավմուդը եւ գտնվել գրականությունը:

գ) մանդերեն (մանդաիա) - Իրաքի հարավում եւ Իրանի Խուզիստան նահանգում այս բարբառով գրվել են գրական ստեղծագործություններ, աղոթքներ:

Արեւմտյան եւ արեւելյան բոլոր բարբառներից լայն տարածում է ստացել եւ գրական

լեզու է դարձել միայն սիրիակը: Միջին արամեերենը գոյատևել է մինչև արաբական գերիշխանության հաստատումը և արաբերենի փոխարինող դառնալը, այսինքն՝ մինչև Է դարը: Ուսումնասիրողներից ոմանք կարծում են, որ միջին արամեերենը որպես գրական լեզու գործածական է եղել մինչև ԺԱ դարը՝ գառնների (գառն եբրայերեն նշանակում է հանճար-Ու.Պ.) ժամանակաշրջանը Բսրայելում և Բաբելոնում և նույնիսկ մինչև ԺԳ դարը՝ սիրիացի գրող Բար Ավրիայի գրական կյանքի ավարտը:

Նոր արամեերեն - Արամեերենի բարբառները հասել են մինչև մեր օրերը, սակայն դրանցով խոսողների թիվը փարեցփարի նվազում է: Արեւմտյան արամեերենը որպես խոսակցական լեզու պահպանվել է Մաուլա քրիստոնեաբնակ գյուղում և մի շարք մահմեդական գյուղերում՝ Դամասկոսից 60 կմ հյուսիս-արեւելք: Արեւելյան արամեերենը պահպանվել է Իրանի հյուսիսում, որտեղ հայրնի է Ուրմիայի բարբառը, և Բսրայելում՝ Ջաբուի բարբառը: Երկու բարբառներով էլ պահպանվել է գրավոր ժառանգություն: Արեւելյան արամեերենը պահպանվել է նաև Իրաքի, Իրանի, Թուրքիայի և Ռուսաստանի սահմանամերձ շրջաններում:

Արեւմտյան և արեւելյան բարբառների արանքում (թե՛ աշխարհագրական, և թե՛ լեզվական առումներով) գտնվել է «թուրոյո» ընդհանրական անունով բարբառախումբ, որը քրիստոնյա հակաբիկյանների խոսակցական լեզուն է Թուրքիայի հարավ-արեւելքում՝ Թուր Ավդինում: 1985-ին հայտնաբերվել է թուրոյոյին մոտ մի բարբառ՝ «մելախեցին», որով առ այսօր խոսում են պարսկական Ահվազ և Խուրամշահի քաղաքներում ապրող մանդայական համայնքները: Նոր արամեերենի բոլոր բարբառները կրել են փոխաբանական լեզունների՝ արաբերենի, պարսկերենի, քրդերենի և թուրքերենի ազդեցությունը¹:

Թարգմանված հարվածը պարզորոշ ցույց է տալիս, որ հին սյուրիերենը եղել է միջին արամեերենի բարբառներից և չնայած մոտ է եղել արքունական արամեերենին, սակայն չի նույնացվել նրա հետ ու չի կրել նույն անունը: Լեզվաբանական առումով ուշագրավ է Պիսերեզի բերած այն փաստակերպը, համաձայն որի հին արամեերենը համարվում է ոչ հոմոգեն, այսինքն՝ խառնուրդ լեզու: Այսպես հարկ է նշել, որ դեռևս X դարում արամեերենը խառնուրդ լեզու է անվանել հրեա լեզվաբան Սաադյա Նազաունը՝ առաջին արամեերեն-եբրայերեն բառարանի հեղինակը:

Այժմ փորձենք հասկանալ, թե ինչո՞ւ են հրեա թարգմանիչները խոսափել «արամեերեն» եզրը գործածության մեջ դնելուց: Պիսերեզը հենց սկզբից նշում է, որ ԺԹ դարում երոսլացի լեզվաբաններն արամեերենն անվանել են Chaldaean, քանի որ Դանիել Բ 4 գլխում հիշատակված «կաադի»-ները (կր՝. կաադիմ, հունարեն՝ խաղայա, հայերեն՝ քաղղեացիներ) խոսում էին արամեերեն: Նայրնի է, որ բանասիրության մեջ վիճարանությունների փոփոխությունը ոչ միայն «քաղղիերեն», այլև «քաղղեացի» եզրը, որը ԺԹ դարի վերջից մինչև Ի դարի սկիզբը գործածվել է շումերների վերաբերմամբ:

Ասորական արձանագրությունները վկայում են, որ Խալդու անունը առաջին անգամ հանդիպում է Բաբելոնի թագավոր Նաբուլասարի օրոք՝ Բ. ծ. ա. 890-856 թթ.: Խալդուները

1 Տե՛ս Շմունի Պիսերեզ, Արամեերեն, Երուսաղեմ, 1991, էջ 78-87:

Բաբելոնում վերջնականապես իշխանություն են հաստատել Ք. ծ. ա. 625-604 թթ. հաղթելով ասորիներին և դրանից հետո հրեաների համար գրավելով ասորիների տերությունը: Նաբոպալասարի որդու՝ Նաբոգոդոնոսորի փրկապետության ժամանակ նոր բաբելոնական կամ խաղյան մոնարխիան հասել է հզորության գագաթնակետին և խաղյունները տապալել են հրեական թագավորությունը: Դրանից հետո Բաբելոնում խաղյունների թագավորությունը անկում է ապրել պարսից փրկապետության շրջանում:

Աճառյանի արմատական բառարանում խաղ բառի ստուգաբանությունը տեղ չի գտել, իսկ քաղղ, ասորերեն՝ խաղայա բառը բացատրվում է երբայերեն կաղիմ (արմատն է կեսեղ, իմ-ը հոգնակիակերպ վերջավորությունն է) բառի և բաղաձայանը ս վերածվելով: «Բոլորն էլ ծագում են Քաղղեացոց ազգի հատուկ անունից և իրենց առաջին նշանակությունն է «քաղղեացի»: Այս ազգն էր, որ աստվաբաշխության և մոգության հիմնադիրը եղավ և մինչև վերջն էլ այդ գիտությանը ուսուցիչը մնաց: Նույններն անգամ աստվաբաշխության գիտությունը նրանցից սովորեցին և «յունացբոլոր գուշակները, հմայողները և մարգարէները կամ Եփրատի ափերից էին գալիս կամ քաղղեական հին սրբավայրերում սովորած էին համարում. քաղղեացի բառը կախարդի հոմանիշ դարձավ»²:

«Նայոց լեզվի պատմություն» աշխատության մեջ անդրադառնալով հայերենի վրա հին լեզուների ազդեցությանը, Մ. Աճառյանը խոսում է նաև ասորերենի ու խաղերենի մասին՝ հիմնականում կենտրոնանալով պատմական իրադարձություններ վրա:

«Շատ հին ժամանակ սեմական ցեղի մի ճյուղը մեկնելով Արաբիայից՝ գալիս նվաճում է Քաղղեստանը և իր մեջ ձուլում տեղացի շումերներին՝ Ք. ծ. ա. 4 հազար թիվ: Այնուհետև սեմականացած Քաղղեստան հիմնում է մի մեծ պետություն, որը տարածվում էր մինչև Միջերկրական ծովը, իր իշխանության տակ առնելով նաև Ելամը՝ մի ընդարձակ երկիր Պարսից ծոցից մինչև Նամադան: Ելամացիք ապստամբում են և ոչ միայն տապալում են Քաղղեստանի իշխանությունը, այլև իրենք նվաճում են այդ երկիրը՝ հիմնելով նոր Ելամական պետություն: Քաղղեստանի սեմական ժողովուրդները թողնում են ու հեռանում, իսկ մի մասը, անցնելով արևմուտք՝ հիմնում է Փյունիկեն, մյուս մասը գալիս է հյուսիս և հիմնում է Բաբելոնն ու Ասորեստանը (Ք. ա. ԻԳ դար): Ուր դար է տեսնում Ասորեստանի այս ահավոր պետությունը և հետո Կիմմերների ու Սկյութացոց արշավանքի ժամանակ՝ Մարաց ձեռքով ի սպառ ջնջվում ու անհետանում են՝ Ք. ծ. ա. 608: Քաղաքական այս խոշոր մեծությունը չէր կարող առանց ազդեցության մնալ նվաճված ժողովուրդների քաղաքակրթության ու լեզվի նկատմամբ: Այն ժամանակ, երբ Ասորեստանը իր փառքի գագաթնակետին էր ապրում, հայերը (արմենները) դեռ չէին մտնում Նայաստան՝ Խաղիա: Նրանք բնակվում էին դեռ Փոքր Ասիայի միջին մասերում և Ալիսի հովտում, և չկա ոչ մի հետք, որ ցույց տա, թե հայերն էլ հայտնաբերված լինեն ասորեստանցիկ: Բոլորովին ուրիշ է խաղիների հարցը: Խաղիները 700 տարի շարունակ շփվելով ասորեստանցոց հետ, անշուշտ, շատ ավելի մեծ չափով ազդված պիտի լինեին նրանցից: Ասորերենի ազդեցությունը խաղերենի վրա անուրանալի է»³:

Եթե հիշենք, որ հին ասորերենը որպես պաշտոնական լեզու արամեերենի կողմից դուրս

2 Մ. Աճառյան, Նայերեն արմատական բառարան, հ. 4, Երևան, 1979, էջ 543:

3 Մ. Աճառյան, Նայոց լեզվի պատմություն, մաս առաջին, Երևան, 1940, էջ 194:

է մղվել -Բ. ծ. ա. Է դարից, ուրեմն ասուրերեն ասելով Աճառյանն, անշուշտ, նկատի է ունեցել արքունական արամերենը:

Անդրադառնալով հայերենի վրա խաղերենի ազդեցությանը, Աճառյանը գրում է. «Նախքան հայերի գաղթը Նայաստան, այս երկիրը բնակված էր մի առանձին ժողովրդով, որը կրում էր խաղի անունը, ըստ «Բսենոֆոնի» խաղայա: Երկիրը մեկ պետություն չէր կազմում, այլ բաժանված էր զանազան իշխանությանց, որոնցից ամենամեծն ու նշանավորներն էին Նաիրի, Բիայնա, Ուրարտու: Այս ժողովրդի ծագումն ու նախնական պայքարները բնավ հայրնի չէ մեզ, պայքարյան մեջ անգամ երեսն են գալիս -Բ. ծ. ա. ԺԴ- դարում ասորեստանցոց դեմ մղած պաշտպանողական պայքարազմերով: Ասորեստանցիք Միջագետքում կազմելով մի մեծ պետություն, ուզեցին նվաճել իրենց հյուսիսային հարևաններին: Նվաճված ժողովուրդների և Ասորեստանի միջև սկսվեց մի մեծ պայքար, արևմտյան բոլոր ժողովուրդները միացան և մի հզոր դաշնակցություն կազմեցին Ասորեստանի դեմ: Ասորեստանցոց թագավորը 21 անգամ արշավեց նրանց վրա և այդ դաշնակցությունը խորտակեց: Նույնպիսի մի դաշնակցություն կազմեցին նաև խաղիական ցեղերը, որոնց գլուխն անցավ Ուրարտուի Արամն թագավորը -Բ. ծ. ա. 860 թ., դաշնակցության կենտրոնը եղավ Բիայնայի Տուսպա քաղաքը: Այն բոլոր պետությունները, որ գտնվում էին Ասորիքի շրջանում՝ Նաբեթը, Կումմուխ, Կարկեմիշ, Մալաթիա, Նամաթ, Դամասկոս, Սամարիա, Նրեաստան, Փյունիկե, Փղշպացիք, Տյուրոս, Մովաբի և Ամմոնի վտրք երկրները և Մարաստան միասին խաղիների դաշնակցության մեջ՝ իբրև վասալ երկրներ»⁴:

Եթե ուշադրություն դարձնենք «խաղայա» բառին, ապա կրկնենք, որ այն գործածվում է թե՛ սեմական քաղղեացիների, թե՛ ոչ սեմական ուրարտացիների վերաբերմամբ: Սրացվում է, որ Սուրբ Գրքում գործածվող եբրայերեն կեսեդ բառի խաղ-քաղդ փառադարձությամբ զանազանվում են երկու փառքեր ժողովուրդներ, որոնցից մեկը ուրարտական առաջին թագավոր Արամի ժողովուրդն է՝ խաղերեն խոսակցական լեզվով, իսկ մյուսի՝ «քաղղեացիների» ծագումն առ այսօր հայրնի չէ: Նայրնի է միայն, որ նրանք ապրել են Բաբելոնում և խոսել են արամերեն, որն, ըստ սեմագիտության, սեմական Արամի ցեղախմբի լեզուն է: Սուրբ Գրքում սեմական Արամի ծննդաբանության հակասություններին անդրադարձել ենք՝ քննելով եբրայագիտության մեջ առկա որոշ խնդիրներ⁵: Այժմ հանրագումարի բերելով վերոնշյալ նյութը՝ կարող ենք եզրահանգել, որ ուրարտական-հայկական առաջին թագավոր Արամի հզորության շրջանում՝ -Բ. ծ. ա. 859 թ., «արամերեն» եզրը գործածվել է խաղերենի վերաբերմամբ, որից հետո փառածվել է Դամասկոսի թագավորության խոսվածքի վրա և այդպիսով սեմականացվել: «Յոթանասնից» թարգմանության մեջ «արամերեն» (առամիտ) եզրը սրբագրելու հրեա թարգմանիչների որոշումը բացատրելի է հենց այդ հանգամանքով:

4 Ն.Աճառյան, Նայոց լեզվի պայքարություն, մաս առաջին, էջ 150, 153:

5 Տե՛ս «Էջմիածին» ամսագիր, 2010, Ը, էջ 126: